ՖՐԱՆՍԻԱՅԻ Օ ԴԸ ՍԵՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԽՍՏՈՐԵՆ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԳՐԵՍԻԱՆ

23.09.2022 15:09

Ֆրանսիայի Օ դը Սենի փաստաբանների միության խորհրդի հայտարարությունը

Ֆրանսիայի Օ դը Սենի փաստաբանների միության խորհուրդը սույն թվականի սեպտեմբերի 21-ին գումարած նիստում, նախագահությամբ միության նախագահ Միշել Գիշաղի, իր աջակցությունն է հայտնել Հայ ժողովրդին, որը նորից բախվել է պատերազմի սարսափելի արհավիրքին և խստորեն դատապարտել է Հայաստանի նկատմամբ ագրեսիան, որի ընթացքում զոհվել են ավելի քան 200 զինվորական և քաղաքացիական անձինք:

Ֆրանսիայի Օ դը Սենի փաստաբանների միությունը միաժամանակ իր աջակցությունն է հայտնել իր լավ բարեկամ ՀՀ փաստաբանների պալատին և հավաստիացրել հայ փաստաբաններին իրենց խորհին եղբայրական և գործընկերական մտահոգությունները՝ հույս հայտնելով, որ հակամարտությունը հնարավորինս շուտ կավարտվի և իրենց բարեկամ երկրում կհաստատվի խաղաղություն:

BACK $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })